# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Շիրակամուտ համայնքի ավագանու հերթական  նիստի վերաբերյալ**

| **Համայնքը** | **Միջոցառման անվանումը** | **Օրը** | **Ժամը** | **Անցկացման վայրը** |
|---|---|---|---|---|
| Շիրակամուտ | Ավագանու հերթական նիստ | 26.01.2021թ. | 15:00 | **Շիրակամուտի** համայնքապետարանում (գ.Շիրակամուտ, Հայկական փողոց,շենք 2) |

# ՕՐԱԿԱՐԳ

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ԺԱՄԸ՝ 15:00-ԻՆ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1.Շիրակամուտ համայնքի ավագանու 2021թ. հունվարի 26-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Զեկ.Ա.Երանոսյան/

2. Դրամական օգնություն հատկացնելու մասին:

/Զեկ. Ա.Երանոսյան/

3.Հ Լոռու մարզի Շիրակամուտի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող, տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկ.Ա.Երանոսյան/

4. Շիրակամուտ համայնքի 2021թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

/Զեկ.Ա.Երանոսյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Զեկ. Ա.Երանոսյան

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, , Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդված1-ին մասի 3-րդ կետով՝ Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Փոփոխություններ կատարել Շիրակամուտ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 21-ի ,Շիրակամուտ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 33-Ն որոշման մեջ՝ որոշմամբ հաստատված 1-6 հատվածները հաստատել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ,ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՙՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Զեկ.Ա.Երանոսյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, և 37-րդ հոդվածներով, համայնքի ավագանին ,որոշում է.

Հաստատել Շիրակամուտի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող, տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /համաձայն հավելվածի/:

2. Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտ համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 21-ի թիվ 35-Ա որոշումը:

Հավելված

Շիրակամուտ համայնքի ավագանու

, ,26 " դեկտեմբերի 2021թ..թիվ 4-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ,ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**Աշխատակիցների թվաքանակը՝** 15

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը ամսական |
|---|---|---|---|---|
| **Քաղաքական և հայեցողական պաշտոններ** | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 320000 | 320 000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 165000 | 165 000 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 120000 | 120000 |
| | | | | |
| **Համայնքային ծառայության պաշտոններ** | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 176000 | 176000 |
| 2 | Գլխավոր մասնագետ | 1 | 165000 | 165000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 3 | 145000 | 435000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 120000 | 120000 |
| | | | | |
| **Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ** | | | | |
| 1 | Հավաքարար | 0,5 | 135000 | 67500 |
| 2 | Հավաքարար | 0,5 | 130000 | 65000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Բակապահ | 1 | 100000 | 100000 |
| 4 | Վարորդ | 1 | 100000 | 100000 |
| 5 | Սանտեխնիկ | 1 | 125000 | 125000 |
| **6** | Ջրաբաշխման գծով բանվոր | 1 | 100000 | **100000** |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՐԱՆՈՍՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Զեկ. Ա.Երանոսյան

,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի ,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին'' թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի 2020թ. բյուջեի 10.7.1 դասակարգման 4729 հոդվածից հատկացնել սոցիալական օգնություն երեսուն հազարական դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Հավելված**

**ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու**

**2021 թվականի** հունվարի**26 -ի  N3-Ա որոշման**

**ՑՈՒՑԱԿ ՀՀ  ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

1.Գրիգորյան Միեր Ա.  -   երեսուն  հազար դրամ, / սոց. օգնություն/

2. Կոնդրատևա Շուշանիկ Ս.  -   երեսուն  հազար դրամ, / սոց. օգնություն/

3.Երանոսյան Մայա Հ.  -   երեսուն  հազար դրամ, / սոց. օգնություն/

4.Մազմանյան Արմեն Վ  -  երեսուն հազար դրամ  /սոց.օգնություն/

5.Ժամակոչյան Գառնիկ Մ.  -երեսուն հազար դրամ  /սոց.օգնություն/

6.Հովակիմյան Լամարա  Վ.  -երեսուն հազար դրամ  /սոց.օգնություն/

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ  ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝  Հ. ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ.
ՅՈՒՆՎԱՐԻ 26 -Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Զեկ.Ա.Երանոսյան

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով` համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2021թ. հունվարի 26 -ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1.Շիրակամուտ համայնքի ավագանու 2021թ. հունվարի 26-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2 . Դրամական օգնություն հատկացնելու մասին:

3.ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող, տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4. Շիրակամուտ համայնքի ավագանու 2021թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին